

64. Հարցաքննութեան աւարտելուց վետով, հոդաբարձութեան նախագահին, ուսուցիչներին վարժուհների ստորագրութեամբ կաղմումէ արձանագրութիւն, որի մէջ նշանակում են հարցաքննութեան արդինքներն և անոնները թէ ան աշակերտների և աշակերտուհների, որոնք արժանաւոր կը լինին փոխադրութեան կամ վկաչագրի և թէ ան աշակերտների և աշակերտուհների, որոնք նոյն բաժանմունքում պէտք է մնան, կամ որոնք ուսումնարանից պէտք է իսպառ արձակվին. Ալդ արձանաղբութիւնը ուղարկում է ի հաստատութիւն Առաջնորդի, որը, վաւերացնելով նորա կանոնաւորութիւնը, վետ է զարձնում գործադրութեան համար և ուսումնարանում պահպանելու համար:

65. Ամառնավին արձակուրդի ժամանակը որոշում է քաղաքներում գոմիսի 15-ից ց25 օգոստոսի. Խակ գիւղերում սահմանում է տեղական հանդամանքների համեմատ, ան է՝ հունձների, ազգեկութի ժամանակ, հոգաբարձութեան որոշման համեմատ, որ մի անգամ ընդմիշտ հաստատում է Առաջնորդը.

66. Եկեղ.-Ծխ. ուսումնարանների աշակերտները և աշակերտուհները արձակում են կիւրակի և ան տօն օրերը, որ կը նշանակեն Ամենավեհ Հայոց Վեհափառ Հարբապետից հաստատելի առանձին ցուցակում:

ԱՄՍԻԱՑ ՔՐՕՆԻԿ

ԱՄՍՈՒՆԱՅԻՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Ահա, վերջապէս, գրասեղանիս առջեւ նստած Զեռքս եմ առնում գլուխս, որ մի տասնեակ օր անգործ էր մնացել, Ես օգուտ էի քաղել ժամանակից՝ մի տասնեակ օրով հեռանալ Թիֆլիսի ամառակ միակերպ և իրօք տաղտկալի կեանքից, հեռանալ ու զնալ Անդրկովկասի ան վալերը, որոնք ամենալաւ ամարանոցների հուշակ են ստացել. Դրանք են Բօրժօմ և Արասթուման, Ես առաջին անդամն էի տեսնում թէ մէկը և թէ միւսը, Խոստովաճում եմ և վկացում՝ նրանք արժեն ան բոլոր գովեստներին, որ միշտ լսել եմ նրանց մասին. Բաց ինձ թւում է, թէ Արասթումանի մասին շատ առելի քիչ են խօսում, քան Բօրժօմի մասին. և, ըստ իս, անիրաւաբար. Արասթումանը Անդրկովկասի ամենասքանչելի անկիւններից. մէկն է և նշանաւոր է նրանով, որ ոչ միայն ունի անսպաման լաւ, չոր, առողջ, խօսակ, մաքուր օդ, չնորհիւ իւր բարձր դիրքի (4.248 ոտնաշափ ծովի մակերեսովթից բարձր) և առատ անտառալին բուսականութեան, ուր սոնին մեծագուն տեղն է բռնում, այլ և նրանով, որ մի աղղախի գեղեցիկ և մաքուր տեղում կակ թէ գետակ և թէ տաք ջրեր, որոնց օգտակար զարձնելու համար բանել են և փող և մանաւանդ խելք, գիտութիւն՝ միացած անձէր աշխատութեան հետ, իբր արդիմք սիրու

դէպի գործը, Արասթումանը Ռեմերտի գործն է, բժշկապետ Ռեմերտի, ուր երկար տարիներ, մինչ վերջին տարիներս, գլուխ էր Կովկասնան բժշկական վարչութեան: Թէ որ ուրիշներին լսէի, Ռեմերտը պէտք է Արասթումանի վերակ տէրունական գանձարանից մի քանի միլիօն մսխած մինէր և ինքը դրանով հարստացած, Բայց ինչպէս ես հաստատ աղբւրից տեղեկացաւ, Ռեմերտը Արասթումանի վերակ մսխած է ընդամենը 600.000-ըուրլի, ճիշդ է, որ ալն, ինչ նա զլուխ է բերել աղ գումարով, սովորական ինժեներները գլուխ կը բերէին անշուշտ մի քանի միլիօն րուբլիով: Գոնէ աղդ տպաւորութիւնը արաւ վերաս մանրազննին ծանօթութիւնը այն շինութիւնների հետ, որոնցից մէկի մէջ տաք ջրերը արհեստական կերպով պաղեցնուում են, միւսի մէջ ամփոփւած են տեսակ-տեսակ վաճանաներ և գետակի ջրի աւաղաններ, երրորդի մէջ գոլորշի բաժինն է և այլն, Բայց ո՞քան մեծ հմտութեամբ է շինւած աղդ բոլորը... Արտասահմանում իսկ գժւարութեամբ՝ կը գտնաւի միւնուն տեղում Փիզիքական բըժը կութեան համար մի աղքան կատարեալ սարք ու կարգ: Ալդաեղ ամեն ինչ շինւած է խստագոյն պահանջների համեմատ: — Արասթումանում տրտող բժշկութիւնը Փի լ դ ի ք ա կ ա ն է, որովհետև դեղեր չեն գործածում աղդաեղ, ալ հիւանդ մարմնի վերակ աղդում են տաք թէ սառը ջրով և ելեքտրականութիւնով և նողն իսկ ելեքտրականութիւնով աղդում են մարմնի վերակ ջրի միջոցով: Կան ելեքտրական վաննաններ, զանազան տեմպերասուրի բնական տաք ջրերի վաննաններ, կան գետի սառը ջրի աւաղաններ, կակ աղբւրի ջրի խիստ սառը աւաղան 9°-ով, կակ բաժանմունք սառը դուշերի համար, դուշեր, որոնց 5—6 տեսակները ամփոփւած են մի բարձր և մեծ սրահում և որոնցից իւրաքանչիւրը իւր չատուկ գործադրութիւնը ունի, Դուշերից մէկը խփում է մինչ 3 ատմոսֆեր ուժով, որը սոսկալի է: Աղդակի դուշեր, ինչպէս Արասթումանում կան, չը կան ոչ միան թիֆլիսում, ալ և առհասարակ ամբողջ Կովկասում, Նոնը պէտք է ասւի և ելեքտրական վաննանների համար, որոնց սարքը, ինչպէս վկալում էր աղդ բաժնի կառավարիչ դօքտօր Բարակեանը, Եւրոպակում գործիւն ունեցողների մէջ անդամ ամենալաւերիցն է:

Ես օգտուում եմ դէպքից իմ ընթերցողների հետ մի փոքր խօսել Արասթումանի ջրերի մասին ալն պատճառով գլխաւորապէն, որ Արասթումանի ջրերի մասին հասարակութիւնը նախապաշարւած կարծիքներ ունի, որ միանդաման ցանկալի չէ և վնասակար: Ինչու դէպքից օգտելով, չ'աշխատենք աւելի ճիշդ դաղափարներ տարածել մի տեղի մասին, որը մեր երկրումն է, մեր քթի տակին և ուր ամեն տարի հարիւրաւոր մարդիկ են գնում առանց կանխապէս իմանալու, թէ ինչ տեղ են դնում կամ իրանց կամքով կամ բժշկի խորհրդով, և կամ չեն գնում՝ միմիան անհասկացողութիւնից և նախապաշարւած կարծիքներ ունենալուց Արասթումանի ջրերի մասին...

Ահա ինչու, ամենեին չը վախենալով, որ ինձ կը մեղադրեն թէ ևս քը-
րօնիկեօրի սովորական սահմաններից զուրս եմ գալիս՝ իմ ընթերցողնե-
րին վատահանում եմ զբաղեցնել մի խնդրով, որը ահագին փոթորիկ բարձ-
րացրեց բժշկական աշխարհում 6—7 տարի առաջ, բայց որը դուրս եկաւ
բժշկական ներ շրջանից, ստանալով հասարակական նշանակութիւն, որը
պահպանել է դեռ ցածրօր:

Բանը նրանումն է, որ Աբասթումանի ջրերը առաջ հոչակած էին
և գրաւիչ էին հասարակութեան և հիւանդների համար գլխաւորապէս ան
պատճառով, որ կարծում էին, թէ այդ տեղի ջրերը ծծ մբաէին են. Մե-
ծամեծ ծախքերը, որ արտեցին Աբասթումանի ջրերի համար, կարծես ար-
դարացնում էին միմիակն նրանով, որ այդ ջրերը ծծմբավին են. Բայց
ահա քիմիկոսները և բժիշկները, աւելի մեծ ուշադրութեամբ քննելով այդ
ջրերը, գտնում են որ դոցա չի կարելի դասել ծծմբավին ջրերի շարքում
ան պատճառով, որ նոցա մէջ ծծումը շատ աննշան քանակութեամբ է
գտնում, ան է 1000 մասնիկ ջրի վերաէ գալիս են ծծմբավին մասնիկ-
ներ մի քիմիկոսի հետազոտութեամբ 0.0055, միաների ասելով՝ 0.0071, որ ա-
սել է թէ շատ չնչին քանակութեամբ:

Այն հասարակութիւնը, որը ջրերի մէջ միմիակն ծծումը գորութիւ-
նըն էր ճանաչում իր գրկարար, այդ նոր գիւտերով վրովվեց, մտածե-
լով, որ մինչ այդ ժամանակ բժիշկները նորան, ալսպէս ասած, խաբել են,
Ռեմերու, որը Աբասթումանի բժշկական շինութիւնների նախաճեռնորդն
էր և գլխաւոր գեկալարը, պէտք է զգար իրան ներ դրութեան մէջ. բնա-
կանարար հասարակաց կարծիքը նորան պէտք է մեղադրէր; թէ
նա մոլորեցրել է տէրութեանը, հասարակութեանը և որ, ուրեմն, Աբա-
թումանի ջրերը իրը թէ ոչ մի բանի պէտք չեն.

Ումը չի բախնի, թէ չարախնդութիւնը ի՞նչ սովորական ախտ է ըը-
ժըշկական դասակարգի մէջ: Կայլն ուրեմն չարախնդաց բժիշկներ, որոնք
այդ նոր գիւտի մէջ միջոց տեսան անդրդեմը Ռեմերախն դետին գլորելու.

Ինքը Ռեմերար և ան մասնաժողովը, որը ընտրւած էր Աբասթու-
մանի ջրերը կանոնաւորելու համար, շտապեցին լավանելու, որ ծծումը
կալ, միակն թէ նա կորչում է ճանապարհին, անսպէս որ երբ փակ խողո-
վակները և հերմիտիկապէս՝ փակ ջրամբարը պատրաստ կը լինին, ան ժա-
մանակ ծծումը կը մնաէ անկորուստ և Աբասթումանի ջրերը կրկին կը-
տանան իրանց սկզբնական լատկութիւնը:

Ազդ խոստուն քները, կարծես, աւելի ևս կասկածաւոր դարձրին Ա-
բասթումանի ջրերի ապագան:

Կովկասեան բժշկական Ընկերութիւնը, որտեղ զիսաւորապէս տեղի
էին ունենում այդ վիճաբանութիւնները և որը ներգործական դեր էր կա-
տարում Աբասթումանի ջրերի կանոնաւորելու գործը մէջ, բաժանած էր
կուսակցութիւնների, ուր անձնականը վերջին դերը չէր խաղում:

Ազգակս էր գործի դրութիւնը, երբ վիճաբանութեան մէջ խառնվեց դօքտօր Աւետիք Բարափեանը իւր մի զեկուցումով, կարդացւած կապսեական կոլիասեան Բժշկական Ընկերութեան նիստում, 1-ին նոյեմբերի 1883 թ.։

Դօքտօր Բարափեանը իւր այդ զեկուցման մէջ, որ աչքիս տակ ունիմ ալս բոպէին, խնդրին տևեց մի ուրիշ ուղղութիւն, և կանգնեց մի ազ տեսակէտի վերակ, որը ի վերջու ասպիտոլ հանդիսացաւ և որի չնորհիւ խնդրը վճռեց լոգուս Աբասթումանի ջրերի ապագային Ես խօսում եմ տեսակէտի մասին. թէ արդեօք խնդրի այդ ուղղութիւն տալուն ո՛րքան են նպաստել ուրիշները ալ. Բարափեանից առաջ կամ նրանից կտոր՝ այդ ես չը գիտեմ և այդ ինձ չի էլ հասաքքը բարում, բայց որ այդ տեսակէտին է պարտական Աբասթումանը նրանով, որ նա կրկին ձեռք բմբեց իւր բարձր նշանակութիւնը տէրութեան և բժշկական վարչութեան աչքում՝ այդ անկասկած է: Բայց հասարակութիւնը, որը խնդրների էութեան մէջ թափանցելու սովորութիւնը չ'ունի, երկար ժամանակ մնաց վաղեմի տաք վիճաբանութիւնների տպաւրութեան ներքով, և իւր վշտութեան մէջ պահեց լավտնած կարծիքներից միան աննպաստները, իսկ մամուլը չը նպաստեց նախապաշարումների փարատման: Բայց մամուլ ասելով, ի սէր Ասուծուու, չը հասկանաք հավկական մամուլը, որովհետև որ և է Աբասթումանի ջրերի խնդրը լ'նչ մի խնդրի է, որ հավկական մամուլը արժանի դատէր նորա նոյն խակ գործութիւնը վիշել, ուր մնաց թէ այդ առիթով եղած վիճաբանութիւններով իւր ժամանակին հասաքքը բրեցրէր...»

Դօքտօր Բարափեանը իւր վերտիշեալ զեկուցման մէջ պնդում է, որ Աբասթումանի տաք ջրերը ծծմրուին հանքաջրերի շարքը դասելու չէ, որովհետև, որպէս ասացինք, ապացաւած է, որ նոյցա մէջ ծծմրալին մասնիկները շատ անհշան տեղ են բռնում: Բայց, ասում էր նա, ծծմրալին չը լինելով, Աբասթումանի ջրերը չեն կորցնում իրանց բարձր նշանակութիւնը հէնց այն պատճառով, որ այդ ջրերը տաք ջրեր են, գիտութեան մէջ լավտնի՝ ան տար բեր տեր մեր անունով (անգլիական տերմու),

Բանից դուրս է դալիս, որ տաք ջրերը, լինին նոքա աւել թէ պակաս հարուստ հանքալին բաղադրութիւններով, հէնց այն պատճառով որ որոշ աստիճանների տաքութիւն ունին, մեծ նշանակութիւն ունին բժշկութեան մէջ, Նւ ինչո՞ւ Որովհետև տաք ջրերը ունին այս լատկութիւնը, որ արագացնում են մարմնի մէջ կատարող սուբստանսների փոխանակութիւնը (օբյեկտ առաջարկութեան մէջ այդ ջրերը ծծումք ունին, թէ չ'ունին:

«Թուլու բրոշիւրների մէջ, ասում է պ. Բարափեանը, որ ամեն տարի մեծ քանակութեամբ դրում են տաք ջրերի մասին, թէ անտարբենների և թէ ծծմրալինների, ամենքի մէջ մինչնորդ լատկութիւններն են գովում: Միակ զանազանութիւնը նորա մէջ կը գտնենք, որ նևարդալին սիստեմի մի քանի հիւսնդութիւնների համար, որպէս հիւստերիա, նէստրալգիա, հի-

պօխօնդրիա, թուլացած մարդկանց համար, ալսպէս կոչւած «թուլկրծքանի» հիւանդների համար—գերադասում են անտարբեր ջրերը. իսկ հնացած սի-ֆիլիսի համար գերադասութիւնը տալիս են ծծմբավին ջրերին, Աւ բժշկացեալ աւելացնում է, որ, նոյն իսկ ալդ վերջին հիւանդութեան նկատմամբ, ծծմբավին տաք ջրերը ազդում են ոչ անքան իրանց մէջ պարունակած ծծումբի, որքան ալդ ջրերի տաքութեան պատճառով և թէ մի քանի նշանաւոր մասնադէտներ բոլորովին չեն ընդունում, թէ ծծումբը որ և է աղղեցութիւն ունենակ սիֆիլիտական պրօցեսի և «մերկուրիալիզմ» վերաբ:

Տաք, ալսպէս կոչւած անտարբեր ջրերը, որպէս երեսում է պ. Բաբակեանի զեկուցումից, ղեռ հնուց փառք են ձեռք բերել մի շարք հիւանդութիւնների բժշկելու համար: Ալդ հիւանդութիւնների անունների ցուցակից իմ ընթերցողների համար դուրս եմ բերում մի քանի անուններ: Դոքա են՝ ընմատոփելը իւր զանազան արտակալութիւններավ, կաշվ պարբերական հիւանդութիւնները, դեղնացակի (զօլոտուխա) ուռուցքներ, նեարդավին (ջղալին, ներւակին) հիւանդութիւններ, հին կաթւածահարութեան (պարալիչ, դամբլա) տեսակներ (բաց ոչ ամեն տեսակները), զանազան ներւաղեաններ, հիպերտոնեաններ, հիստերիակի, հիպօֆիօնդրիակի, ներաստենիակի մի քանի ձեսեր, բրազտեան հիւանդութիւններ, հնացած ձների սիֆիլիս և ավճ, և ավճ:

Դէ այժմ աւելացրեք ալդ բոլորի վերակ 1) որ հաճքերով ոչ հարուստ տաք ջրերը աւելի պիտանի են մեծ չափսերով խմելու համար, օրինակ՝ մի քանի քրօնիկական հիւանդութիւնների միջոցին, 2) որ անտարբեր տաք ջրերը մեծ մասամբ գտնում են սքանչելի լեռնուա և անտառուտ տեղերում, 3) որ ալճ տեղերում, ուր կան անտարբեր տաք ջրեր, լեռներից գալիսանցնում են սառը աղջիւրներ, որոնցից օգտում են դուշեր և ալլ և ալլ սառը վաճճաներ շինելու համար, 4) որ անտարբեր տաք ջրերում նեարդավին հիւանդների համար շինում են ելեքտրական և հիւանդատածական կարինետներ և որ ալդ ջերմուկներում է, որ մեծ գործածութիւն է գտնում կաթնավին և կումիսավին բժշկութիւնը և բաւական անուշ վաճանակները և ալճն:

«Եւ ահա ալժմ, ասում է նոյն հեղինակը, հասկանալի է, թէ ինչու անտարբեր ջերմուկները ներոպարում տարեցտարի աւելի ու աւելի մեծ նշանակութիւն են ստանում նաև լաճախորդների շատութիւնով և որ միաս ջերմուկներից շատ սակաւաները (թէկուզ նշանաւոր ծծմբավին ջերմուկները) կարող են համեմատել ալդ կողմից անտարբերների հետ: Ահա ինչու անտարբեր ջերմուկների մասին հանգամանօրէն դրոշներից մէկը, դօքտօր Բառուման, իրաւունք ունի պնդել, թէ «ջերմուկներից, նորերումս որից ուժեղապէս օգտում են, անտարբեր ջերմուկները աւելի գերադասելի են»:

Այս բոլոր փաստերով ուղեմն ապացուցմեց, որ Արասթումանի ա-

պազան ամենեին չի կախւած նրանից, թէ նորա ջերմուկների մէջ ծծումըը մի քիչ աւել է, թէ մի փոքր սակաւ և որ հարկաւոր չէ, որ Աբասթումանը լինի մի երկրորդ կօտերէ, ուր, Պիրենէկեան լեռներում, ծծումըը շատ մեծ քանակութեամբ է. ապացուցեց, որ անտարբեր ջերմուկ լինելով հանդերձ, Աբասթումանը շատ լաւ ապագակ կարող է ունենալ և պէտք է ունենալ, որպէս ունին այս բոտէին և վաղուց ի վեր Եւրոպակի անտարբեր ջերմուկները, որոնց անունները մանաւանդ հարուստ դասակարգին և պարբերական մամուլին հետեղներին լաւ լատոնի պէտք է լինին, Ահաձեղ Վլիղբարդը (Գերմանիակի Շվարցուալդում), Շլանդերադ, (Գերմանիակի Վլիսբադենի հանանգում), Խօնաննիս-բադ (Աւստրիա, Բօհեմիակի Հսկալական լեռներում), Վարմբրունն (Գերմանիա, Պրուսիակի Սիլեզիա երկրում): Եւ վերջապէս ումը չէ լատոնի Գաշտանը, որ տիեզերական հոչակ ունի (թուլացած ծերերի, կաթածահարների, նւաղած բեւմատիկների համար և ալճն), որը գտնում է Աւստրիալում, Ալպեան լեռների մի նեղ հովտում, նման Աբասթումանի տեղին. ումը չէ լատոնի Տեղլից-Շօնառ՝ Ասարիակում, Բիլա գեղեցիկ գետի բազմաբնակ հովտում, որ ամեն տարի դէպի իրան է քաշում 12—13 հազար հոդի: Եւ զեր կան ուրիշներ:

Աբասթումանը նոյց շարքումն է, եւ Աբասթումանը մի բանով էլ որոշում է վիշաններից՝ նրանով, որ նոյց բոլորից ամենաբարձրն է, քանի որ եւրոպական անտարբեր ջերմուկներից ամենաբարձրը Գաշտանն է, որ 3.225 ոտնաչափ է բարձր ծովից, իսկ Աբասթումանը, Փօն Կոշկուի չափելով, որպէս վերը ասացի, 4.248 ոտն. բարձր է ծովի մակերեսովից: Աբասթումանը ալղպիսով ամենաբարձր ակրատօտերնն է:

Ազդ խօ աղբակէս. Բաց այն, ինչ մարդս պէտք է ամենից առաջ գնահատի Աբասթումանում, ալդ նորա կլիմայական և տեղադրական պայմաններն են, նորա լեռնացին նօսրացած բարեխառն սդի աղդեցութիւնը ոչ միան հիւանդի, այս և առողջի վերակ, և առհասարակ շրջապատող բնութիւնը, որով հիացած էր նաև պրօֆ. Ռ. Ֆիրիսովը իւր ացելութեան միջոցին 1881 թւականին:

Աս չեմ ուզում աւելի ընդարձակել Աբասթումանի թէ տեղի և թէ ջրերի մասին: Նոյց հետ հիմնաւորապէս ծանօթանալու համար, հարկաւոր կը լինէր դիմել մի շարք մասնագէտների աշխատանքներին, որոնք Աբասթումանի վերաբերեալ ստեղծել են ամբողջ գրականութիւն, որպէս Սկօրօւ, Լիբառու, Ռեներտ, Շտալբերգ, Գոպաձէ, Բաբակեան, Կաղկին և Բաղարով բժիշկներ. քիմիկոսներից՝ Աբել, Ստրուէ, Շատկման և այլ հեղինակներ, որոնց աշխատութիւնները հետաքրքիր ընթերցողը կարող է գտնել կոլկասեան Բժշկական Ծնկերութեան ժողովածուների մէջ, չը խօսած անթիւ մանր ջողածների և զեկուցումների մասին, որոնք ցրւած են ալդ ընկերութեան նիստերի արձանադրութիւնների մէջ:

Բաց զարմանալի բան. ալղքան շատ բան կաէ զրւած մեր երկրի մի

գեղեցիկ «անկիւնի» մասին, բայց հասարակութիւնը և նորն իսկ նրանք, որոնք սովորութիւն ունին Արասթուման գնալու և քանիցս անզամ ախտեղ են անցկացրել ամրան ամիսները, — ոչ միայն այդ գրականութիւնից ոչինչ չը գտնեն, ալ առհասարակ ոչ մի բանից տեղեակ չեն, Նոքա չեն էլ հետաքրքրում այդ գրականութիւնով, կարծես թէ մասնագէտների ասածն ու հետազոտածը միայն և միմիշան մասնագէտների շրջանում պէտք է մնան և երբէք այդ շրջանից չը պէտք է դուրս գան Տգէտ և անգէտ—ման են գալիս «րոշչա»-ներում, մինչդեռ կարդալ գտնեն և, մի փոքր հետաքրքրութիւն որ ունենան, մի քանի տեղեկութիւններ կարող կը լինեն իրար հաղորդել Օրինակ, մի լուսաւորած մարդ, կամ մէկը, որ իրան լուսաւորած է կարծում, ի՞նչպէս երկու-երեք ամիս մի ամարանոցում, որպիսին Արասթումանն է կամ Բօրժօմը, կենակ, օդից ու կլիմակից միշտ խօսի և վերջ ի վերջու իմանում չը լինի թէ իրանց կեցած տեղերը ո՛քան բարձր են ծովի մակերեսովթից, Դա խօ մի շատ հասարակ բան է իմանալը և ամնաառաջին տեղեկութիւնն է, որ մարդու, մի տեղ ոտք դնելիս, պէտք է կարդալով կամ հարց ու փորձից, բայց ճիշդ կերպով իմանակ, Բայց արի՝ ու տես, որ հազարից միայն մի քանիսը հարկաւորութիւն և պարտաւորութիւն են զգում այդ հանգամանքներից տեղեկանալ. մնացածները գոն են, երբ, ամարանոցից վերադառնալիս, կարող են վկաել, թէ 2—5 կամ 10 ֆունտաչափ չաղացան...

Բայց ասենք թէ հասարակութիւնը մնզանում ազգպէս է, ապա ո՛ւր են ան մարդիկ, որոնք, գործին մօտիկ լինելու պատճառով և աշխարհը տեսած լինելով հանդերձ, չեն փորձում բրօշիւրներ հրատարակել այդ հետաքրքրական տեղերի մասին և չափաւոր գնով այն մարդկանց տալ, որոնք այդ տեղերը ոտք են դնում, Կամսերական կովկասեան Բժշկական Ընկերութեան պարտաւորութիւններից մէկը հէնց այդ պէտք է լինէր՝ կազմել տալ ազգախիլ բրօշիւրներ լատուկ նպատակով, որ առողջանալու և բժշկւելու տեղերի և կովկասի կուր-օրտների մասին, որքան կարելի է, ճիշդ և առատ տեղեկութիւններ տարածեն հասարակութեան մէջ. Դա՝ ամենքի օգուտն է, և հասարակութեան առհասարակ և հիւանդներին՝ մասնաւորապէս և Բժշկական Ընկերութեան, որը դուրանով օգուակար գործ կատարած կը լինէր, և մի քանի բժիշկներին, որոնք ալդ տեղերում հաստատած են և շահ ունին, որ մարդիկ ճանաչեն և գնահատեն իրանց հայրենիքի բան-ձերը. Ցարժմ արդպիսի բան ոչ ոք չի արել, ոչ ոք չի մտածել այդ բանի վերալ և դեռ զարմանում են և գանգատառում, երբ այդ կուր-օրտները միշտ բաւականաչափ լիքը չեն լինում ալցելուներով. Ահա ինչու գովելի է Արասթումանում գործող բժիշկներից մէկի, պ. Ս. Անանեանցի փորձը՝ իւր կեցած տեղի հետ գոնէ ողուերէն ընթերցող հասարակութեան մանրամատնօրէն ծանօթացներ, լուսածներ տալով թիֆլիսի «Նօվօէ-Օքոզրենիէ» թերթին. Հայ բժիշկներ, հետևեցէք տւած օրինակին և մի՛ մոռացէք առան-

ձին բրոշիւրներով հրատարակել այն բոլորը, ինչ կարող է ըմբռնելի վի-
նել նաև ոչ խիստ մասնագէտ, բաց հարցասէր հասարակութեան:

Այս, եթէ կարելի է ասել, ամարանոցավին խորհրդածութիւնները եւ
կ'ուզէի փակել մի ցանկութիւն ևս կավոնելով: Այդ կը լինի բոլորովին ան-
սպասելի. այդ եւ գիտեմ. բաց ինչ արած, որ շատերը ինձ հետ համաձայն
կը լինեն այդ բանում: Հանդամանքը սա է, որ մենք, գրասէրներս, շատ
անդամ զգացել ենք, թէ ո՞քան սակաւ իրական շիռում կակ մեր՝ Կով-
կասեան հակերիս և տաճկա-հակերի մէջ. Թողնենք մի կողմէ հատ-հատ վա-
ճառականներին, որոնք մի-մի դալիս են մեր կողմերը. Թողնենք և մեղա-
նում հաստատած տաճկա-հակ արհեստաւորներին: Շատ և շատ սակաւ է
պատահում, որ կովկասեան մի հայ իւր մօտ տեսնի մի տաճկա-հակի, մա-
նաւանդ մի քիչ «բարձր» շրջաններից և կամ գրագէտ դասակարգից: Բաց
մնք գիտենք, որ նրանք էլ մի քիչ հեռաւոր ամարանոցների կարուու-
թիւն քաշում են. և, թէպէտ ոչ մի վիճակագրութիւն չ'ունիմ ձեռքիս,
բաց անկասկած է, որ արտասահմաննեան կուր-օրտոներում (խօսքս Արաս-
թուումանի ջերմուկների նման անտարբեր ջերմուկների մասին է) կան
նաև Տաճկաստանից գնացած հակեր: Արդ, եթէ նոքա իմանան ալ, մի բանը,
որ Բաթումից մինչ Արասթումաննոր շօսսէտվ 60 վերստ, որ ասել է մօտ
65 կիլոմետր, ուրեմն ընդամենը 8 ժամեալ ճանապարհ է, ինչ խօսք, որ
հեռու ամարանոցներ սիրողները և կամ հիւանդներից շատերը նաև Արաս-
թուումանին և սրանից 7—8 ժամ հեռու Բօրդոմին հերթ կը լշանակեն և
ալլուել իրանց աղդակիցներին ժամադիր կը լինին: Դորա մասին կօմմեն-
տարներ աւելորդ են:

Հանասպարհը Բօրժոմից՝ Արասթուման անցնում է Ախալցխավի մի-
ջով: Ախալցխան մեր պարբերական մասնութիւն մէջ անքան իւր մասին խօ-
սեցնել է տեւել, մանաւանդ իսօ ապս տարի, —ով չի վշում ակնտեղի խալ-
տառակ անցքերը գարոցի պատերի մէջ.—որ ես մի առանձին անհամբե-
րութեամբ սպասում էի նորա տեսնելուն: Հեռուկից ալդ քաղաքը բաւակա-
նին լաւ տեսք ունի. շրջապատած երեք կողմից ոչ շատ բարձր լեռներով,
քաղաքը մի քանի վերստ հեռոււից, թաղւած է երևում ազգիների մէջ: Բաց
որքան մօտենում էք—անքան հիասթափում էք: Նրբ ծոռում էք ճա-
նապարհը լեռան մօտով, Ախալցխա մտնելու համար,—ալլուել միան տես-
նում էք քաղաքի բերդի մասը, որը հին մասն է, բնակեցրած գլխաւորա-
պէս հրէաներով և հակերով: Հրէաների թաղում ո՛չ մի բուսականութիւն-
տեները փռքրիկ և խիստ իրար մօտ շնած, անճոռնի, անարւեստ, կեղտու-
տեներ են, և երեխ նոխակէս են և բնակիչները: Տպաւորութիւնը ծանր է, մարդ
խղճում է դրանց, առանց օգնել կարողանալու...»

Այդ թաղի առջնում էք կամուրջը, որ շինած է Փոսխով
գետի վերալ, այն գետի, որը միանալով Ախալցխավից ներքև Խրդը գետէ

հետ, կազմում է խսկական կուր գետը, և ամուրջից դենը սկսում է նոր Ախալցիսան, որը ամբողջապէս բնակեցրած է հակերով, ձանապարհը գէպի պօստի կալարանը բարձրանում է վեր, երիւ կողմը խանութներ են և արհետանոցներ, Մի քանի բողէից լետու կառքը ծուռում է ձախ փողոցով, որի աջ կողմում աչքի է ընկնում քաղաքավին ալզին, որ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում:

Կալարանից ընկերոջ հետ շտապում ենք քաղաքը ացելելու, Անցնում ենք գլխաւոր փողոցը ծալքէ ի ծալք, Բայց է՞ս ինչ բան է. մի հատ օրինաւոր տուն չը կատ. ինչ որ փոքրիկ ու ցած, անշուք, անարւեստ խըրձիթներ, առանց բազի, լետելից երեացող փոքրիկ պարտէզով. Ըլվատրութիւնը ողորմնիլի է: Մեծ փողոցի ամբողջ ընթացքում հազիւ կան երկուերեք չին տներ՝ երկարկանի, բարձր, Ալդ մանրիկ տների մէջ բնակւողների կեանքը և նիստն ու կացը երեսում է արդէն նրանից, որ գրեթէ առանց բայցառութեան, ամեն մի տան մուտքի տալանում խմբած են 3,4,5 և աւելի կանաքը ու աղջիկներ, աճապէս որ կարծես կանանց բոլոր կեանքը ալդ տալաններումն է անցնում և սենեակները կարծես աւելորդ են, ինչ փողոցով անցակ, տեսարանը նողն էր. ոչ մի տեղ չը տեսաէ իրանց տան տալաններում խմբած կանանց և աղջիկների մօտ մի զիրք, մի լրագիր. կամ վայրահաչ խօսում են և կամ ձեռագործով են զբաղւած, իրօնիա կը մինէլ զանամուրի և ալլ դորա նման բաների մասին խօսելն անգամ. Մի գաւառացի հակ տիկին և օրիորդ, նոխակէս գաւառացի մի հակ պարոն, որոնց հետ միասին էինք եկած, բայց որոնք զնացել էին մէկի մօտ ացելութեան, վերադարձան կալարանը բերելով իրանց հետ միանգամայն նողն տպաւորութիւնները. Պարոնը նկատեց նաև, որ ժողովուրդը պէտք է շատ ծով լինի, քանի որ, ինչ տան պատից նա տեսել է քարը վայր ընկած, պակաս տեղը ախապէս էլ մնացել է, և որ ալդ կարելի է նկատել ամեն քապակիոնում:

Աս լաճախ կարդում եմ լրագիրներում Ախալցիսավից թղթակցութիւններ, որոնց մէջ հինգ ալն է որ գրում են քաղաքավին վարչութեան անգործութեան մասին. Աս դատավճիռ չեմ տալիս ալդ վարչութեան գործունէութեան մասին առհասարակ. բայց ակսքանը կ'ասեմ, որ, եթէ նորագործերից մէկը փողոցները շինելն է և պահպանելը, իմ տեսած փողոցները իրանց անհարթութիւններով, խորտ ու բորտերով հանդերձ, աւելի պատիւ են բերում Ախալցիսավին ման քաղաքին, քան ալդ քաղաքի տները, որոնք ողորմնիլ են, որպէս ողորմնիլ է երեսում և բնակիչների կեանքը.

Ինչ' ցն է քաղաքի ալդ անշքութիւնը. Ալդ խնդիրը ինձ պարզեց մի ախալցիսացի ծերունի, 75 տարեկան ծերունի, որը դեռ ևս լիակատար տէր է իւր մտաւոր և հոգեկան կարողութեան. Ալդ ծերունու ընտանիքն է, որ իմ ուղեկից տիկնոջ, պարոնին և ինձ, իբր ծանօթների, հիւրասիրեց Աքապթումանից մեր վերադարձի ժամանակ. Ալդ ընտանիքումն է,

որ ես ճանաչեցի բուն ախալցիսացուն, բաց արդէն ունեոր դասակարգից: Բաց ունեոր և չունեոր, շատ թէ քիչ փակւած քաղաքներում, նմանութիւններ ունին շատ և շատ աւելի, քան այդ կարելի է ասել մեծ քաղաքների մասին, հաշելով դոցա մէջ և թիֆլուսը: Մեզ հիւրասիրող ծերունին ունի մի պառաւ կին, որը իւր նման զւարթ է, ունի չորս որդի, որոնցից անդրանիկը մօտ 45 տարեկան է: Դա է աժմ տան սիւնը, դա է շարունակողը հօր արևստի, որը երկաթազործութիւնն է: Միւս տղերը ուրիշ գործերում են:

Ան, ինչ արտաքուստ, քաղաքի տեսքից ու շնորհից չի երևում, այդ երեաց մեղ հիւրասիրողների մէջ—բուն հավական հիւրասիրութիւն, առաս սրտից բղխած: Ախալցիսալում դեռ ևս իւր կատարեալ ոժի մէջ է հավական նահապետական սովորութիւնը, որի շնորհիւ մի մարդու որդիներ և թոռներ անբաժան միմեանց հետ կենում են: Ես այդ սովորութիւնը շատ տեսակէտներից չեմ հաւանում և մինչև անգամ մեր կեանքի դարգացման համար բոլորովին աննպաստ պալման եմ համարում: Բաց որ այդ սովորութիւնը ևս իւր հրապունքներն ունի,—ոչ ոք չի կարող հերքել, մի պալմանով, որ անխախտ մնալ այդ կարգ ու կանոնի հիմքը՝ իսրը պատկառանք և հնազանդութիւն տան մնձին և նորան, ում վերաէ այդ մնձը անց է կացնում իւր իրաւունքները: Առանց այդ սկզբունքի, այդ սովորութիւնը հասարակական ամենամեծ չարիքներից մէկը կը լինէր: Որքան ուրեմն մեծ բարդ է, երբ ալդպիսի մեծ գերդաստաններում տան մնձը իւր կոչման բարձրութեան վերաէ է կանգնած, երբ նա բարի է և խելօք:

Ես լաբոնեցի՝ իմ մի քանի տպաւրութիւնները Գ. աղավին: Ախալցիսական պարոն խօսքի տեղ լաճախ աղա են ասում: Գ. աղան պատմեց մի քանի քաներ Ախալցիսակ անցեալից ու ներկավից: Ներկաւ ախալցիսից գաղթականներ են կարինից և եկել են կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ: Գ. աղավի ասելով, Տաճկաստանից այդ տարի դուրս եկած գաղթականների թիւն էր 96.000 հոգի: Ի՞նչ մեծ գաղթականութիւնն ուրեմն: Միմիան կարին քաղաքից գաղթողների թիւն է եղել 4000 տուն, ուրեմն երեխ 20—30.000 հոգի, եթէ ոչ աւելի: Սա լաւ վշշում եմ այդ գաղթականութիւնը, ասաց նա: Ես աշն ժամանակ 14 տարեկան տղալ էի: Սոսկավի բան է գաղթականութիւնը. թշնամուա չէի ուզիլ այն վիճակը, որի մէջ ընկանք, գաղթելով Ախալցիսա, թերին մեզ ալսոել, է՛ն, դէ տուն չ'ունէինք, տեղ չ'ունէինք, օգնական չ'ունէինք: գործը թողած, ալլրուստ չը կար: Եղած տների մէջ մի տեսակ տեղաւորեցինք, մի տան մէջ 20—30—50 հոգի ապրելով և ամեն տեսակ զրկանքներ կրելով: Հենց միան ալլավեղ ո՛րքանը հիւրանդութիւնից ու ժանտախտից մնուան: Ուուսաց կառավարութիւնը ամեն մի տան տւեց 60 րուբլի՝ մեր առաջին պիտուքները հոգալու համար: Բաց ի՞նչ կարելի էր անել 60 րուբլիով: Գաղթողներից

շատերը փախչում էին, բայց կառավարութիւնը խստիւ արգելում էր, ըսունում էր նրանց և կրկին լեռ բերում: Բնակութիւն հաստատելու համար տվին մեղ քաղաքի ահա ալս մասը, որը այն ժամանակ դատարկ էր և ուր միայն ապիներ կավիճ: Կառավարութիւնը մեզ տվեց տեղ բնակութեան համար մեծ տարածութիւն, մինչ ալսոելից երեք վերստ հեռու կուր գետը (Արդահանի գետ կամ Խրթըզ չա): բայց ան ժամանակ մենք ալդ չը գնահատեցինք: Միթէ, ասում էին գաղթողները, կարելի է ալսքան իրարից հեռու աներ շինել, ալսքան իրարից հեռու բնակել... Հաւաքւեցինք ահա ալս նոր քաղաքի տեղը. շինեցինք միայն ալնքան և ախպէս, որ մի տեսակ բնակել կարելի լինէր...»

Խակը սա է, որ Կարինի և Բարձր-Հակը ժողովուրդը բաղ ու բախչի սովոր չէր և չէ. ինչ որ տեսել էին կարինում, գաղթականները նոյն ձեր և իրանց չքատոր հասկացողութեան համեմատ բնակութիւն էին հաստատել իրանց նոր հավենիքում և ապակս էլ, քիչ թէ շատ ուներների մեծ մասը—նոր հարստացած են և չեն պատկանում գաղթելու ժամանակաւայ աւագանիներին:

Իրբ հին կարինցի և առհասարակ վաղեմի տաճկա-հակերից, որոնք դեռ վառ կերպով վիշում են իրանց նախկին հավենիքը, Գ. աղակի ասելով, կարինից գաղթողների մէջ կավին մեծատոններ, որոնցից միայն քիչը մնում են իրանց հարստութեամբ. այժմեան քիչ թէ շատ ուներների մեծ մասը—նոր հարստացած են և չեն պատկանում գաղթելու ժամանակաւայ աւագանիներին.

Իրբ հին կարինցի և առհասարակ վաղեմի տաճկա-հակերից, որոնք դեռ վառ կերպով վիշում են իրանց նախկին հավենիքը, Գ. աղան մեծ հետաքրքրութեամբ ոչ միայն հետևում է Տաճկա-Հակաստանի կեանքին, ալև և մեծ հաճութեամբ կարդում է ալդ երկրի մասին գըրւածքներ: Նորա հետաքրքրութեան առարկան, ակժմեան գրականութեան մէջ, «Մուրճ»-ում տպառող «Աց»-ն է Թիւրքաց Հակաստանին՝ պլ. Լ. Սարգսեանցի և պլ. Արտավետեանի «Խե-կարապետը»:

—Ի հարկէ, ասաց ճաշին Գ. աղակի մեծ որդկերանցից մէկը, պլ. Սարգսեանը շատ բան չափազանցրել է, առանց ալդ չէր լինիլ...

Ես շտափեցի լատնել, որ «Աց» հեղինակը ամեններին միտք չի ունեցել և չ'ունի Տաճկա-Հակաստանը զօրով սև դուրս բերելու, ալւ նա նկարագրում է տեսածը,

—Ի՞նչպէս կը կարծես, բարձ, դիմեց հօրը նորա սկեպտիկ որդին: Կ'ուզեն իմանալ, թէ ան գրածները չափազանցրա՞ծ են, թէ ոչ:

—Ո՛չ, ամեններին, պատասխանեց Գ. աղան. «Մուրճ»-ին մէջ ան գրածները շատ ճիշդ են. որքան ալ տիսուր են, բայց մարդը զորդ տեսած նկարագրեր է: Շատ լաւ գրած է: շատ ճիշդ գրած է: Կարելի է որ ալսունդ ու ախտենդ... զժւարացաւ շարունակել Գ. աղան, էհ, դէ... կարելի է..., բայց ի՞նչ ասեմ, որդի՛ս, իսկ և իսկ անպէս է, ինչպէս գրած է, լաւ կը վշիմ:

այս կարապետումը ևս շատ հետաքրքրում է Գ. աղավն. որովհետեւ նա դպնում է՝ որ ալդ վէտի մէջ դուրս բերած տիպերի և իւր անձնական փորձի մէջ համեմատութեան շատ կէտեր կան.

Ախալցխավի մասին, որը 15—16.000 բնակիչ ունի, ընթերցողս թող սպասի, թէ պէտք է մի լիակատար նկարագրութիւն տամ. Անցնելով, սակալն, նկատենք, որ քնակիչների մնագոյն մասը հայեր են, որոնց մէջ և չը գիտեմ՝ ո՛րքան հակ-կաթօվկիներ. Լուսաւորչականները ունին չորս եկաղեցի. 1) Ամենափրկիչ, որ է մարտ-եկեղեցին. 2) Սուրբ Ստեփանոս, հին քաղաքում. 3) Լուսաւորչակ եկեղեցի. 4) Սուրբ Նշան, կաթօվիկ հայերը ունին երկու եկեղեցի, մէկը հին, միւսը նոր քաղաքում. Համերից գետով դալիս են հրէաներ և ապա մի քանի տուն վրացիք, լոներ և տաճիկներ. Ուսւա ազգաբնակութիւն չը կաէ, իսկ ուղղափառ եկեղեցին բերդում է, հին մասում, «բարբաթի» վերաբ.

Չը մոռանանքնաև է ստեռիկը. Թիֆլիսում շատ հոչակւած է ախալցիսացոց կանանց գեղեցկութիւնը. Երբ մնանում զաւաները բաժանում են տիպերի, Ախալցխավին, իրու բաժին, ընկնում է կանանց գեղեցկութիւնը, ինչպէս Ղարաբաղինը՝ մարդկանց գեղեցկութիւնը, և ալդ դէպում չեն մոռանում վիշել Ախալցխավի կանանց ինքնուրուն գեղեցիկ հավիական հագուստը և Ղարաբաղի կանանց անճունի հագուստը. Եւ իրօք, հագուստի կողմից ի՞նչ մնեց զանազանութիւն. և ո՛րտեղից որտեղ... Ախալցխաւ ասելով, ի հարկէ, պէտք է հասկանալ Կարին կամ էրզում, որտեղից նոքա եկած են. Բայց Ախալցխավի կնոջ հագուստը ճաշակաւոր է, որպէս շատ բան ճաշակաւոր է, ինչ զուս հավկական է, առանց խառնուրդի մօնգոլականի և թաթարականի. Աղջիկը չոկում է կարգած կը-նոջից իւր ֆաս-փիւսկիւրով, որը գլխի գեղեցիկ և ճաշակաւոր ծածկոց է. Դորա տեղ կինարմատը ունի և աղմա, ասինքն ծածկոց. հագուստի մը-նացած կտորները նոյնն են. զլմի զարդի համար՝ շալովին, վարդը (աւելի բելիք հանած ճակատանոց), կտորցը (մարգարտի շարք), ոսկի շէրիթը (ոսկի շարք), մարմնի վերական կրծկալ, ջիւպապա, գողնոց, շէրիդ (գօտիկ) և իր ոտնաման՝ մաս պապուճ, առանց կրնկի, դեղին գոյնի.

Իսկ ինչ վերաբերում է կանանց տիպարին, անկարելի է չը վկաչել որ ալդ տիպարը գեղեցիկներիցն է. նա ունի որոշ և խիստ կտրած գծեր, որոնք ընդհանրապէս խոչոր են.—Բայց հակառակ կանանց, տղամարդիկ ընդհանրապէս գեղեցիկ առնական տիպար չեն ներկալացնում.—Փոքրիկ, աննշան, լաճախ տգեղ, առանց խիստ գծերի, Դա՛ բնարոշ է, որովհետեւ, գոնէ իմ դիտածովը, հավկական ցեղի մէջ, մնացնում, Անդրկովկասում, աը-ղամարդկանց տիպարը կանանց տիպարից գերազանց առանց լութիւններ ունի. Անդրկովկասից դուրս՝ Մշնցիք ալդ կանոնից բացառութիւն չեն կազմում, Ուի չէ հիացել մշեցու տիպարով, որքանով որ նրան կարելի է ճանաչել մանաւանդ Թիֆլիսում եղած բազմաթիւ օրինակներով: Նոյն իսկ

մեր օտարամոլ թիֆլիսի, քւաղի-հալի, թէ մարդկանց և թէ կանանց հասարակութեան աշքից չէ վրիպել ալդ երեղթը, բարձր-Հազը, մասնաւորապէս կարինը, պէտք է որ ներկայացնի հակառակ պատկերը, Գոնէ Կթէ Ախալցիլսան Կովկասեան կարինն է, կարինի կնոջ տիպարը, իւր գեղեցկութիւնով, պէտք է գերազանցէ տղամարդու տիպարից, Վանի հալերի մէջ, իմ, զեռ ևս ոչ վակատար ծանօթութեան համեմատ, պէտք է որ տղամարդու տիպարը շատ աւելի ստոր վճի Մուշի հալերի տիպարից, Պօլսցի հաէ տղամարդը չնչին է, հաէ կինը՝ նշանաւոր է թէ կաղմածքով և թէ տիպարալ:

Տիպարների որոշելը և նոցա մանրազննին հետազօտութիւնը շատ տեսակէտներից կարեւոր է և հետաքրքրական: Հայկական նորագուն և հընագուն գրականութիւնը ալդ նիւթի մասին գրեթէ ոչինչ չի տալիս, Բայց անիրաւացի կերպով: Տիպարները իրարից որոշում են, որպէս ընաւորութիւնները որոշում են: Որ և է հետազօտութիւն «հալի» մասին կը լինի շատ թերի, առանց հակական ցեղի տիպարների համեմատական հետազօտութեան և նոցա գնահատութեան: Ճիշդ է, որ գնահատութիւնը ամեն մարդու գործ չէ: Այսաեղ հարկաւոր է մի մարդ, որը ճաշակի հետ միացնել կարողանակ բոլորը, ինչ կաէ եւրոպական գրականութեան մէջ ալդ նիւթի մասին՝ օտար, ինչ թէ նոր ազգերի վերաբերեալ: Ահա՞ մի նիւթ, անսպառելի նիւթ մեղ խոստացւած պատկերազարդ թերթերի համար, եթէ միան նոքա ձեռնհասութիւն ունենան դոնէ մի աղոպիսի ծառապութիւն անելու հակական գրականութեան:

ՀՈՒՍԻՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՑԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ԹԱՆՉԱԺՈՒ-
ՂՈՎՈՅ Ի ՀԱՆԴԻՍԻ ՍԱՀԱԿ-ՄԵԽՐՈՊԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

ի 29 լունիսի 1889.

Այս երրորդ տարեշրջանն է այն գրական հանդիսին, որ տեղի կ'ունենակ ասս ի մակրաքաղաքիս, ըստ բարենպաստ կտակի բարեվիշտուակ Յովսէփակ Խզմիրեանց Ղզլարեցւու, որ ինչպէս իւր կենդանութեան ատենքաջալեր հանդիսացաւ Ազգավին Պատմութեան և Դպրութեան համար աշխատող գրիչներու, նոյնպէս և լեռ մանւան կտակաւ աւանդած է շարունակել ալդ քաջալերական նպաստը առ արժանաւորս, ի ձեռն Ազգավին Պատրիարքարանի կարգեալ Յանձնաժողովու, լատուկ հանդիսիւ, և լաւուր հանդիսաւոր տօնի Սրբոց երանելի թարգմանչաց Մեծին Սահակակ և Մեսրոպակ բաղմերախտ Հարցն մերոց, որոց անմուանալի և վեհ լիշտակը կը տօնէ ակսօր մեր Հալերի Առաքելական Եկեղեցին: